

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ *)

(պ. Կալամիրի յօդուածները «ՅՆ. Պուրջ»-ի քերթում)

Որտեղ չը կայ հաւասարութիւն, այնտեղ չի կարող լինել և միութիւն: Հայը ամենախելօք և ամենալաւն է համարում իր ազգը և ներքին է դառնում, եթէ նա հպատակեցնի ուրիշներին և հայացնի Վրացիներս էլ ունենք այդպիսի ցանկութիւն, բայց թողած սրտի խորքում, և եթէ ի նկատի չենք առնի վրաց լեզուն, որը գործում է հին պատմութեան թողած ինքնիշխով, ինքն ըստ ինքեան, չենք դիպչիլ այլ ազգութիւններին. մենք այնքան խրտնած ենք և վախեցած, որ այդքան համարձակութիւն չէինք կարող յայց տալ: Հայերը փոխադարձաբար շատ համարձակ են (չափից դուրս համարձակ, որպէս զի ուրիշ անուն չը տանք) և անչափ տարուած են մեծ Արմենիայի իդէալով **): Ով շատ է մտածում իր մասին, նա պակաս չափով է յարգում ուրիշներին: Այն սլօյնմիկայի ժամանակ, որ ունէին հայ լրագիրները ազգութեան մասին. «Մշակը» գրում էր՝ «Ինչ պակասութիւններ էլ ունենան վրացիք, մեզ—հայերիս հետ համեմատած, այսուամենայնիւ, էլի մի բանում վրացիք համեմատաբար բարձր են կանգնած մեզանից: Ուղիղ է, վրացիք հայերի չափ հարուստ պատմական անցնալ չունեն, մեր հին գրականութեան նման հարուստ գրականութիւն չունեն, մեր նոր լեզուի նման ընդունող, յառաջադիմող, ժամանակակից, լեզու չունեն, չունեն ազգային անկախ եկեղեցի, բայց միւս կողմից ազգային քրեանձանաչութիւնը նրանց մէջ աւելի է զորգացած... Նրանք պահպանել են մայրենի լեզու, նրանք ոչ

*) Տես «Մուրճ» № 11.

**) Այստեղ գուցէ և այլ տեղ մենք չափից դուրս ենք մեղադրում հայերին, առ կարող է պատահել, քանի որ օգտուում ենք միմիայն վրացական աղբիւրներից:

Ման. Կալամիրի.

միայն իրար մէջ միշտ խօսում են վրացերէն, այլ և նրանց մէջ ապրող հայերին էլ բարոյապէս առիպեցին վրացերէն լեզուով խօսել» («Դրօշբա» 80 թ. № 217):

Այս դեռ ոչինչ, եթէ պակասում է մէկը, գոնէ ունենք միւսը: 1877 թուին սուս-թուրքական պատերազմի ժամանակ «Рус. Вѣст.»-ում տպուեց Վենիսիոսի մի նամակը, որի մէջ հեղինակը խորհուրդ է տալիս Ռուսաստանին, թէ լաւ կը լինէր եթէ Ռուսաստանին Կարսի շրջանի վերաբերէն՝ միացնուէր Բաթումի շրջանը, քանի որ վերջինում ապրում են վրացիք, իսկ առաջինում հայերը, որոնք համակրելի ժողովուրդ չեն. Կովկասում հրէաների դեր են խաղում և նրանց ուժեղանալը վնասաբեր կը լինի: Սրան «Թիֆլիսի վեստնիկ»ը պատասխանեց, որ աւելի լաւ կը լինի միայնակ հայերին. «Հայ ժողովուրդը աշխատասէր է, ծանր խնրի աէր, Կովկասի այլ ժողովուրդների մէջ նա է հնուց մշակ և արհեստաւոր: Ռուսիայի հետ միանալուց յետոյ հայ ժողովուրդը երբէք չի նեղացրել կառավարութան, ոչ իր քաղաքական անհաւատարմութեամբ, ոչ իր բարեկեցութեան մասին հոգացողութեամբ և ոչ խնդիրներով, որ միլիոններ նուիրուի գանձարանից»:

Ս. Մեսխին բերում է այս խօսքերը և աւելում է. «Միայն մտքով կոյրը չի ըմբռնի, որ յարգելի «Թիֆլիսի լրագրերը» այս խօսքերը չպրտել է վրաց հասցէին...»

Ընդհանրապէս այս վերջին ժամանակներս մեր շրջանաւորումն հայերը մի տարօրինակ սովորութեան և «սխտեմի դիմեցին իրանց ժողովուրդը բարձրացնելու նպատակով: Այս սխտեմը կայանում է նրանում, որ ամեն ինչ, ինչ որ վրացական է, նուստասցնեն: Այս միջոցով, նրանք մտածում են բարձրացնել իրանց ժողովուրդը, իրանց հանկուծիւնների իրագործումը» (Դր. 1877 թ. № 107), բայց ճշմարիտ է նկատում հեղինակը, որ «ուրիշների նուստացումը, ոչ դժիւ չի բարձրացնի»:

Այս կողմից ամենից հետաքրքիր է ֆրանսիական լրագիր «Թան»ի աշխատակից Կուտուլի պատմութիւնը: Այս գէպքին Ս. Մեսխին նուիրում է մի ընդարձակ յօդուած («Դրօշբա» 1877 թ. № 96), որի հետ էլ աւելի մանրամաս կը ծանօթացնենք ընթերցողներին:

Սրանից երկու շաբաթ առաջ Թիֆլիսումն էր գտնւում «Թան»ի աշխատակից Կուտուլը, որի հետ էին լինում միշտ մի քանի հայ երիտասարդներ, թրև ևն տալիս նրան այս ու այն կողմ, գիւղերում և այլ տեղեր հիւրասիրում, ամենքն էլ զարմացած էին մնացել թէ՛ ինչո՞ւ են նեղութեան ու ծախսի մէջ

ընկնում այս երիտասարդները. «Ոչ ոք չէր կարողանում հասկանալ, քանի որ մեր թիֆլիսեցի հայերի կողմից (թէկուզ նրանք երիտասարդ և լուսաւորուած լինէին), ոչ ոք չէր տեսել անհաշիւ վարմունք ու ծախս և ոչ էլ պատճառական բարեկամութիւն և սէր»։ Հիմա պարզուեց որ՝ «Կուտուլի գլխով նրա համար էին պտոյտ գալիս, որ ինչ ուզենային և ինչպէս ուզենային, այնպէս խօսէին նրա հետ և նա էլ նրանց աչքով նայէր ամեն ինչին և ամենքին»։

Հեղինակը մէջ է բերում կտորներ Կուտուլի թղթակցութիւններէից. «Կովկասի մէջ, ասում է նա, այսօր 700 հազար վրացի և 600 հազար հայ կայ, բայց հայերը դարու վերջում աւելի շատ կը լինեն, քանի որ նրանք զարմանալի կերպով են բազմանում. միևնոյն ժամանակ հայերը պահպանում են իրանց ազգային առանձնայատկութիւնները և իւրացնում են եւրոպական կուլտուրա, այն ինչ վրացիք մնում են արեւելեան (ասիական) ժողովուրդ. հայերը մեծ մտաւոր ազդեցութիւն ունեն կովկասեան միւս ազգերի վրայ. Հայ առածը ասում է. վրացիք աչքում ունեն խելք, իսկ հայերը ուղեղում. Կովկասեան ազգերի մէջ հայերը ամենքից կենդանի են։ Հայերից մէկը ասել է Կուտուլին. հայ լրագրի մէջ յաճախ կը կարդաք թէ՛ այս ինչ հայը հարիւր կամ երկու հարիւր հազար նուիրեց ուսումնարաններին. հայերը ունեն բազմաթիւ զենեքաչներ. Յետոյ Կուտուլին տարել են հայ Շիրլազ դիւղը, այստեղացի մի քանի կանաք դուր չեն եկել Կուտուլին, բայց հայերը ասել են՝ որ նրանք վրացուհիք են. հայերը ասել են Կուտուլին նաև որ Կովկասի ապագան ուսման և հային է պատկանում... Մենք հայերս ասում ենք. «Որտեղ հաց, այնտեղ կաց» և սրան աւելացնում. «Ո՛վ պիտի աշխատի. ես ու դու. ո՛վ ունի ուտելու իրաւունքը, ես և դու»։ «Ինչ լաւ խօսքեր են, ասում է Ս. Մեսիսի, բայց դժբախտութիւնը այն է, որ հայերը ուրիշ բոլոր ժողովուրդներից պակաս իրաւունք ունեն, որ այսպիսի բարեկիրթ և սօցիալական միտք ունեցող խօսքեր ասեն... իզո՛ւր հաց չեն ուտեցրել Կուտուլին հայերը։ Մենք իրաւունք ունէինք, երբ այս նկատողութեան սկզբում ասայինք՝ որ հայերի անհաշիւ փաղաքշանքին և ծախքին սովոր չենք»։

Քրանսիական լրագրի աշխատակից պ. Կուտուլի պատմութիւնը ևս առաւել բարկացրեց վրացիներին։ Հաւատալիք չէր, որ մի քանի հայի վարմունքն Կուտուլի վերաբերմամբ միշտ նախատուած կը լինի հասկացող հայերի կողմից։ Ուրիշների առանց պատճառի անպատեւան և նուաստանումն և միևնոյն ժամանակ սեփական անձի փառաբանումը՝ թէ մենք

չատ ենք, իսկ վրացիները քիչ, մենք հայերէն ենք խօսում, իսկ վրացիները կամ հայերէն և կամ ուսերէն, մենք գեղեցիկ ենք, վրացիները՝ տգեղ, մենք ընդունակ ենք, իսկ վրացիները՝ բոլորովին անընդունակ և այլն, սորա բոլորը այնպիսի խօսքեր են և վարժունքներ, որոնք վայել են երեխային և միևնոյն ժամանակ ծիծաղելի են և չենք կարծում, որ իրանք հայերը նկատուիս չը լինեն այդ վարժունքի անպետքութիւնը, անօգուտ և անարդար լինելը:

Բայց եթէ մի կողմը կարող է անցնել ճշմարտութեան սահմանից և դիպչել ուրիշի անձնաւորութեան, միւս կողմի համար էլ հնարաւոր է գերծ չը մնալ նոյնանման սխալներից, իրաւունքներ, մերժուած մասնաւոր փոխադարձ յարաբերութիւնների մէջ, այսօր մերժուած ազգերի կիսանքի մէջ, եթէ մի քանի հայի համար իբր թէ ձեռնտու է վրացիների անունը կոտրել, կան այսպիսի վրացիներ էլ, որոնց դուր է գալիս հայերին հայհոյել և նախատել, մենք ուրախանում ենք, եթէ մէկը անպատուում է հային, կարծեմ ոչինչ չենք լսի և չենք կարգայ այնպիսի հետաքրքրութեամբ, ինչպէս հայերի վախկոտութիւնը, խորամանկութիւնը և անամօթութիւնը, կարծում ենք թէ ճշմարտութիւնը միայն հայերին պատարակելու մէջն է: Բարկացած «Դրօէքա» ն (1877 թ. № 110) նորից վերադառնում է կուտուրի պատմութեան «Հայերի մասին, բայց ոչ կուտուրի լեզուով» վերնագրով ֆելիէտօնի մէջ:

«Վերջերս հայերի և հայոց հարցի մասին խօսելը «մօղա» դարձաւ թիֆլիսում», գրում է յօդուածի հեղինակը... «ամենքն էլ հայերի և հայոց շարժման մասին են խօսում, բայց եթէ ուշի ուշով հարցնելու լինիք թէ՛ ինչի մէջ է կայանում այդ անհանգստութիւնը, դրա պատասխանը չէք ստանայ ոչ հայերից և ոչ ուրիշից»: Սրանից յետոյ հեղինակը պատմում է «Բիրթ. վեդօմ» լրագրի մէջ լոյս տեսած մի յօդուածի բովանդակութիւնը, որտեղ պատարակուած են հայերը. ըստ այդ յօդուածի հայերը անտանելի ժողովուրդ են, ֆանատիկոս և առանձնացած, նրանց վերածնութիւնը անհնար է, չունեն ապագայ, հայերի ոչ գրողներն են լաւ և ոչ էլ պատմութեան մէջ ունեն մի բան:

Դժուար չէ հասկանալ պ. X-ի ֆելիէտօնը.—«Ծաղրեցիք, ուրախացե՛ք, բայց ներողութիւն, վատը ոչ թէ մենք ենք եղած, այլ տգեղ և կորած ազգը դուք ինքներդ էք եղել»:

Մենք հասկանում ենք, «Դրօէքայի» հոգեբանութիւնը. երբ մէկը անպատուում է քեզ, դու էլ փոխադարձաբար սկսում ես հայհոյել «թէպէտ նոյն իսկ կարող ես համոզուած լինիլ, որ հայհոյանքներով և այն էլ անարդար և անհիմն, ոչ կարող է մի

բան շինուել և ոչ էլ փշանալ: Հասկանում ենք այսպիսի հոգեբանութիւն, բայց միևնոյն ժամանակ չենք կարող պ. X-ի պատասխանատու յօդուածին չը տալ նրա ճշմարիտ անունը. — նա էլ նոյնպէս երեխայական վարմունք է նման այն հայերի վարմունքի, որոնք վրացիներին պախարակելով կամենում են իրանց աւերակ քաղաքների շինելը և գոչէ և Հայաստանի վերականգնումը:

«Դրօժբայ»ի 1880 թուականի № 172-ում արտատպած է հայոց լրագիր «Մեղունի» մի լուր Աճաբայից, գրած այն մասին, որ աշտեղ ապրում են մահմեդականացած վրացիք, սոքա առաջ վրացի են եղած, բայց յետոյ կորցրել են հաւատ և թուրքացել են. «Եւզուն էլի վրացերէն է և խօսում են այդ լեզուով՝ բայց վրացիներին ինչ, սրանք վրացիներին շատ են ատում, ատում են իբրև ցաւ «Դրօժբան» չի հաւատում հայ թղթակցի խօսքերին և ասում է՝ «Վերայիշեալ թղթակցութեան գրելու ոճից երևում է՝ որ նա հայի ձեռքով է գրուած»:

Բայց եթէ երևում է որ «Մեղունի» թղթակցութիւնը հայի ձեռքով է գրած «Դրօժբա»-ի նկատողութիւն էլ պարզ է՝ որ անպայման վրացու գրչին է պատկանում:

Հայոց «Մշակ»ը յաճախ գրել է անկեղծ և արդարացի յօդուածներ հայ-վրացական յարաբերութիւնների մասին, բայց նոյն «Մշակ»ը երբեմն իրան թոյլ է տուել տարօրինակ մտքեր, ինչպէս վերև էլ տեսան ընթերցողները, երբ Թիֆլիսում հիմնուած էր վրաց ազնուականների բանկը, «Մշակ»ը տպեց նաև մակ հակառակ բանկի:

«Դրօժբա»ն առաջնորդող յօդուածում (C) «Ինչո՞ւ է կոկսում Մշակը վերնագրով՝ պատասխանեց այդ յօդուածին. Հայոց «Մշակ» լրագրում մի անգլուխ և իզուր ծախածոած յօդուած կարդացի Թիֆլիսի ազնուականների բանկի մասին, գրում է հեղինակը, կարդացի և ինձ ու ինձ հարց տուի թէ՛ ինչո՞ւ է գրել սրա գրողը այս յօդուածը և կամ յարգելի խմբագրութիւնը ինչ նպատակով է տպել այն: Եթէ ես յարգելիս չը լինէի «Մշակ»ի խմբագրութիւնը, շատ բան կը մտածէի», բայց քանի որ գիտեմ՝ որ «Մշակ»ի խմբագրութիւնը արժանի է յարգանքի, այս պատճառով իմ մտածմունքների հոսանքի ուղղութիւնը փոխեցի, հետո քշելով ինձանից սե մտքեր: Այսպիսի ծաղրական ոճով է գրուած ամբողջ յօդուածը: Հեղինակը մեղադրում է հայոց լրագրին, որ նա ստեր է գրում, իբր թէ ապագայ բանկը միայն ազնուականների պարտքը կը տայ և բանկը կունենայ պաշտօնական գնահատողներ: «Մշակ»ը կրկնում է՝ մեր իշխան ազնուականները իրանց անհաշիւ անտեսութեամբ, իրանց շտայլու-

թեամբ մինչև այնտեղ հասցրին, որ ինչ ունէին բոլորը գրաւ գրեցին, հիմա նրանց գրութիւնը վերին աստիճանի ցաւովի է: Գուցէ և ուղիղ լինի այս բոլորը, բայց յարգելի «Մշակ» քո մէջ չենք նկատում այդպիսի մի ցաւակցութիւն: Ի՞նչ այնպէս ես խօսում, կարծես ուրախանալիս լինես... (Դր., 1874 թ. 13 սեպտ.):

Նոյն տեսակ ծաղրական նամակ ենք կարդում «Դրօշբայ»-ի 1877 թուականի № 44 (գրել է մի իմէրէթցի՝ Ա. սի) «մշակի խմբագիր Արծրունին եղել է Գութայիսում, չի հաւանել Գութայիսի ճանապարհը, Գութայիսի կեղտոտութիւնը և ասում է. «Այն տեղ, որտեղ ապրում են իմերեթցիք և հրէաներ, ինչ կարող ենք սպասել կեղտոտութիւնից աւել»: «Այս խօսքերը» չարունակում է պ. Ա. «մենք անպատասխան չէինք թողնի, եթէ համոզուած չը լինենք նրա անկեղծութեան մէջ եւ նրա այս անկեղծութիւնը հաստատուում է նրանով որ իր ազգի վերաբերմամբ էլ անկեղծօրէն խոստովանում է. «ես ամաչում եմ իմ հայութիւնից... չեմ սիրում հայութիւն... այսպէս է գանգատւում պ. խմբագիրը և մեզ էլ նրա բարեկամեցողներին ոչինչ չի մնում այլ եւս ասելու, ըստ հնաւանդ սովորութեան «Մշակին» և նրա խմբագրին. վայ, վայ, վայ, վույ, վույ, վույ... հօ—հօհօ:

Այս փոքրիկ փաստերը նորից էլ մի անգամ գեղեցիկ կերպով բնորոշում են հայ—վրացիական այսօրուայ յարաբերութիւնները: Ամօթ է այսպիսի թերահաւատութիւն և թշնամական ղդացմունքներ տածել դէպի իրար: Միթէ հային պիտի ուրախացնէ վրաց իշխանի կամ ազնուականի աղքատանալը, կամ վրացի մահմեդականների այլասեռումը: Կամ միթէ վրացիք այսպէս պիտի ծաղրեն հայութիւնը և զուրկ պիտի լինեն ամեն տեսակ յարգանքից դէպի նրանց:

Եթէ մեր անհամաձայնութիւնը ունի իր հիմքը, այս բանը երբէք չը պիտի մոռացնի մեզ, թէ ինչ կայ այդ անհամաձայնութիւնից այն կողմը և երբէք չը պիտի մոռցնի մեր մէջ յարգանք դէպի միմեանց ազգայնական անձնաւորութիւնները: Ոչ «Մշակը», և ոչ հայութիւնը ընդհանրապէս չեն գնալ ընդդէմ վրացիներին: Եթէ երբեմն հայ լրագիրը թոյլ է տուել իրան ասելու մի բան հակառակ մեր շահերի, եթէ մի քանի հայ ցանկաղել են վրացիներին «ուտել», այդ դեռ եւս չի արտայայտում ոչ «Մշակին» ուղղութիւնը առհասարակ և ոչ ամբողջ հայութեան ձգտումները: Հայ ազգի գոյութիւնը չի նշանակում վրաց ազգի անոնցալումը: Այս բանը հասկանում են վրացիները և դիմէ հայերի մէջ չը կան այնպիսի հասկացող ինտելիգենտ-

ներ, որոնք կարող լինեն հասկանալ նոյն բանը... Ո՞վ է այն վրացին՝ որ չ'ընդգիտանայ այն հային, որը պատրաստուել է արտաքսելու վրացիներին Թիֆլիսի ինքնավարութիւնից և չի պախարակի այն հայի վարժունքը, որ մի տեղ եկեղեցու պատի վրայից կը ջնջէ վրացերէն արձանագրութիւնը և վերան հայերէն կը գրէ «բարձրացնելու» համար Մեծ Արմենիան: Բայց միթէ այստեղից այն է դուրս գալիս, որ մերժենք միմեանց արժանաւորութիւնները և ջանկանալիս ու ուրախանալիս յիններ միմեանց կորստի համար և կամ ծաղրենք իրար...:

Հայրենասիրութիւնը լաւ բան է, բայց ով որ չափից դուրս կը սրէ հայրենասիրական նետը, ինքն էլ նետահար կը լինի, լինի նա հայ, լինի նա վրացի միեւնոյն է, մէկ է պատմութեան համար:

Եթէ մեր գրականութեան մէջ յաճախ է պատահում, որ անպատուել և ծաղրի է ենթարկուել հայութիւնը, միւս կողմից կը հանդիպէք և այն, որ իսկական արմենօֆօքները անգամ, որոնք տեղի և անտեղի յաճախ մեղադրել են հայերին, — երբեմն յարգանքով են յիշում նոյն հայերին և մատնացոյց են անում նրանց թանկագին առաւելութիւնները ու արժանաւորութիւնները: Հազիւ կը պատահի որեւէ վրացի գրող յոյց տայ մեր պակասութիւններն այնպէս, որ իսկոյն մատնացոյց չանէ հայերին ասելով. ահա նրանք զուրկ են այդ պակասութիւնից: Մենք տգէտ ենք, ասում են նրանք, զուրկ ենք միութիւնից, իսկ հայերը չափից դուրս սօլիդար ազգ են: Մենք անտարբեր ենք դէպի հասարակական ինտերեսները, այն ինչ հայերը չատ են սիրում հասարակական գործը:

Նոյն-իսկ «Իվերեա»-ի մէջ, որ այսօր չափից դուրս բարկացած է հայերի վրայ և կարծում է որ մեր բոլոր դժբախտութիւնները հայերից են առաջանում, նոյն այդ «Իվերիա»ի մէջ կը կարդաք հետեւեալ խօսքերը. «հայերից խելք սովորենք»: Այսօր դժուարութեամբ կը հանդիպէք այնպիսի վրացու, որ ինչքան էլ պախարակելու լինի հային, վերջը դարձեալ չ'աւելացնի. «բայց և այնպէս խելացի ժողովուրդ են»:

Ի՞նչով պիտի բացատրենք այսպիսի հակասութիւն վրացի գրողների դատողութիւնների մէջ դէպի հայերը: Որ մի կողմից հայերը բոլորովին անպէտք ազգ են, այն ինչ միւս կողմից հաւանելի այնպիսի մի ազգ, որոնց պիտի նմանուենք վրացիք: Մեր կարծիքով, սրա գլխաւոր պատճառն այն է, որ առաջին տեսակի նամականքը գրուած են էֆֆելտի ազդեցութեան տակ, անպատուած ազգութեան ինքնասիրութեան ժամանակ. երբ վրացի գրողը դէմ առ դէմ տեսնում է, թէ ինչպէս հայը

ստնատակ է անում վրացու շահերը, նրա սրտի մէջ զարթնում է զարհուրելի ատելութիւն դէպի հայը և այդ ժամանակ նա ուրանում է հայի մէջ ամեն տեսակ արժանաւորութիւնը Այս կուրութեան ժամանակ նա մոռանում է իր նախկին փորձառութիւնը, մոռանում է, ինչ որ առաջ տեսել և շատ անգամ լսել է, մոռանում է այն, ինչ բանի մէջ, որ համոզուած է խոր կեցւոյով, այն է որ իր հարեւան ազգը ծաղրուելու արժանի չէ և իր մէջ ունի շատ այնպիսի յատկութիւններ, որոնք կարող են պատիւ բերել ամեն մի ազգի:

Մենք կողմնակից չենք հայերին իդէալացնելուն՝ ինքը հայ գրողն էլ լաւ է բնորոշել իր պակասութիւնները, բայց չը պիտի խլիւք ազգից նրա լիակատար սեփականութիւնները: Վրաց գրականութեան մէջ սկզբից նկատուում է յարգանք դէպի հայը, յաճախ այդ յարգանքը չի նկատուում բոլորովին: Ուրիշ ուղղութիւններով, ուրիշ մտքերով և դատողութիւններով ծածկուած, և պահուած էր լինում ինչ որ հեռաւոր խորութեան մէջ, բայց նա միեւնոյն ժամանակ երբէք չէր մոռնում և միշտ կրում էր իր մէջ երբեմն գիտակցաբար, իսկ երբեմն անգիտակցաբար հայ վրացական միութեան գաղափարը, այդ գաղափարը, այդ գաղափարի զարգացումն և այսօր նա պատրաստուում է այդ միութեան մարմնացումն, քանի որ միայն փոխադարձ յարգանքն է գոյութիւն տալիս միութեանը:

«Դրօժբա»-ն այնպիսի լրագիր էր, որ չէր ննջարկուում ոչ մի կանխակալ կարծիքի և ուղղակի նայում էր ճշմարտութեան, ինչպէս որ պիտի լինէր նա: «Դրօժբա»-ն մատնացողը աւրաւ վրաց-հայկական և ընդհանրապէս կովկասեան ազգութիւնների միութեան անհրաժեշտութեան վրայ, միշտ աչքի առաջ ունէր այդ միութիւնը, բայց սրա հետ միասին չէր փակում աչքերը այսօրուայ մեր անհամաձայնութեան և մրցման դիմաց: Բարկացած հայերի անմիտ և անարդար վարմունքներից, նա բերում էր ինչ որ մարդկանց կարծիքներ թէ՛ հայերը առանց բնաւորութեան և ընկած ժողովուրդ են, որը չի ունեցել ոչ անցեալ և չի էլ ունենայ ապագայ: Բայց այնպիսի յօդուածները սակաւ են «Դրօժբա»-ի մէջ: Նա աւելի յաճախ յարգանքով էր յիշում հայերին և միշտ դարձնում էր վրաց հասարակութեան ուշադրութիւնը հայերի արժանաւորութիւնների և յառաջադիմութեան վրայ: «Դրօժբա»-ի 1869 թ. № 49-ում առաջնորդող յօդուածի մէջ կարդում ենք՝ «նախ ազգի մի մասը—աւելի ունեւոր—գնում է առաջ, ինչպէս լուսաւորութեան մէջ, այնպէս և կեանքում: Յետոյ այս լուսաւորուած մասը ունեցել է ազգեցութիւն ուրիշների վրայ իր վարմունքներով և խօսքերով և

այդպիսով ամբողջ ազգը շարժուել է առաջ. պատմական այս օրէնքը՝ ջարդարացաւ մեր վերաբերմամբ, ազգը և նրա յատուկագիտութիւնը հիմնկուայ մեր լուսաւորուած հասարակութեան ուշադրութիւնը չի դրաւում: Բոլորովին այլ է հայերի մէջ. լուսաւորուած և ունեւոր հայերը բաց են անում իրանց ծախսով ժողովրդական ուսումնարաններ, արհեստագիտական դպրոցներ և մեծացնում են համալսարանների մէջ երիտասարդ մարդկանց թիւը և այդպիսով պատրաստում են հասարակութեան ապագայ պիտանի անդամներ:

1873 թուի № 39 սուաջնորդողում և՛ Սիւնեի (Նիկողաձէ) բերում է տեղեկութիւններ հայոց ուսումնարանների մասին և ասում է. «Ընթերցողը չը պիտի մոռանայ, որ բոլոր այս ուսումնարանները հիմնել են հայերը իրանց սեփական ջանքով ու աշխատանքով առանց ուրիշի օգնութեան այն նպատակով, որ պապական լեզուն չը մոռանան, չը կորցնեն իրանց ազգութիւնը և գեղեցկացնեն... Այնպէս միք մոռանայ, որ հայ երիտասարդութիւնը մեծ սրտացաւութեամբ է զբաղւում ուսումնարանական գործով... Այս բարի գործի մէջ համարեա բոլոր հայերը համաձայն և միացած են... Այս մէկ հարցում նրանք միտ համաձայն և միասիրտ եղբայրակիցներ են իրար, այն է—«մեր ուսումնարանները պիտի տարածենք, մեր լեզուն պիտի պահպանենք»:

Պ. Ակակի՝ որ շատ անգամ դառն խօսքեր է գրել հայոց մասին, հետեւալ կերպով է համեմատում միմիանց հետ հայերին և վրացիներին. «Եթէ վրացի չը լինէի, մեծապէս սիրող և յարգող պիտի լինէի Վրաստանի հային. Վրաստանից դուրս այսօր էլ հաւանում եմ նրանց, քանի որ չեմ կարող չը գնահատել նրանց արժանաւորութիւնները. նրանք հասկանում են, թէ ինչ բան է հայրենասիրութիւնը և չեն մոռանում իրանց ազգութիւնը. Հազիւ կը պատահէք այնպիսի հայի, որ սառնասիրտ լինէր և կարողութեան չափ օգուտ չը տար իր հասարակական գործին *)... Կրկնում եմ, հայ որ լինէի, կ'աշխատէի և կը հիւսնայի, որ ամեն մի հայ տեանէի հարստացած և բարձրացած, քանի որ կը գիտենայի, որ նա իր մեծութեամբ և հարստութեամբ օգտակար կը լինի հասարակական գործին: Բայց քանի որ վրացի եմ, այնքան էլ դուր չի դալի վրացու բախտաւորութիւնը: Գիտեմ, որ չէն հարստացած վրացին ոչ թէ սրիէ օգուտ կը տայ հայրե-

*) Այն ինչ մենք վրացիներու ոչինչ չենք շինում և մոռանում ենք մեր լեզուն, գանգատում էր Ակակին:

նիքին, այլ մինչև անգամ կը մնաս է նրան. («Եր.» 1880 № 29)։

Ինչպէս ասացինք վերեւ, յարգանքի հողի վրայ կը բուսնի համարաշխութիւն և միութիւն։ Որտեղ կայ փոխադարձ յարգանք, այնտեղ անպատճառ կը ծնուի միութեան ցանկութիւնը։ Բաւական չէ միայն, որ մարդիկ ապրեն միեւնոյն պայմանների մէջ, ոչ ոք չի միանայ նրա հետ, ում չի յարգում...

Կար ժամանակ, երբ հայը համարեա չէր զանազանում իրան վրացուց։ Երկուսն էլ մեկնոյն վրացի թագաւորի հպատակներն էին, երկուսն էլ վրացեակն էին խօսում, ապրում էին միասին, ունէին միեւնոյն շահերը։ Գիւղի մէջ հայը վրացու նման հողի մշակն էր, և թէպէտ քաղաքների մէջ գլխաւորապէս հայը արհեստաւոր էր և վաճառական, բայց քանի որ գոյութիւն ունէին ֆէոդալական կարգեր, և ընտանեկան տնտեսութիւնն էր զարգացած, քաղաքի վաճառականները և արհեստաւորները չունէին այնպիսի մի գեր կեանքի մէջ, որ իրանց հայութեամբ որևէ նկատելի ազդեցութիւն ունենային։ Սրա հետ ի նկատի է առնուելու և այն, որ մինչև Ռուսիայի հետ միանալը, երբ վրաստանի մէջ կար վրաց կառավարութիւնը և չուրջը գոյութիւն ունէր միայն վրացի չրջանը, հայերը ոչ միայն ստիպմամբ, այլ ինքնըստիրիան ընդունում էին ամեն բան, ինչ վրացական եւ, միանում էին վրացիների հետ (երբեմն գուցէ և հաշուով անելիս լինէին այդ բանը), նրանք եթէ նոյն իսկ ցանկանային էլ, չէին կարող ընդդիմանալ վրացականին եւ վրացիութեան, չունէին դրա համար ոյժ, ձեռքին չը կար այն էլեմենտը, որով դիմադրէին վրաց ազդեցութեան։

Վրաստանի՝ Ռուսաստանի հետ միանալը բոլորովին փոխեց մեր կեանքը և ուրիշ հիմքեր դրաւ հայ-վրացական փոխադարձ յարաբերութիւնների տակ։ Վերջ դրուեց վրաց կառավարութեան և հիմնուեց ռուսաց, վերջ դրուեց առանձնացած, մի չրջանի և գառաւ երկու՝ ռուսաց—և վրաց, եթէ առաջ հայը ենթարկուած էր մի չրջանի, հիմա մի չրջանը համեմատեց միւսի հետ, մէկի ինչութիւնը միւսի ինչութեան հետ և առաջ բերու հաս իր սեփական ինչութիւնը։ Կայ վրացի, կայ ռուս, կայ նաեւ հայը։ Նոր ժամանակին հետեւց դասակարգերի և կոչման դասաւորութիւնը.—մեռաւ ֆէոդալականութիւն, վերջ դրուեց սահմանափակ կեանքին, (և ընտանեկան տնտեսութեան համեմատաբար), սրա փոխարէն առաջ եկաւ կապիտալիստական արդիւնաբերութիւն, աշխատանքը բաժանուեց, գիւղ և քաղաքը հեռացան իրարից արդիւնաբերութեամբ, առաջ եկան

վաճառական և արհեստաւոր, որոնք հրամայող դառան այսօր-
ուայ կեանքում Գանի որ էն գլխից էլ վաճառական արհեստա-
ւորներ թիֆլիսի նահանգում գլխաւորապէս հայերն էին, հիմա
էլ կապիտալիստական արդիւնաբերութիւնը զարգալու նրանց
ձեռքում և քանի որ վաճառական արհեստաւորը տէր է, հայ—
վաճառական արհեստաւորի տէր դառնալը մեզանում տուեց
առանձնակի ուղղութիւն մեր կեանքին։ Սրա հետ միասին ա-
ռաջ էր գնում Վրաստանի ընդհանուր լուսաւորութիւնը։ Մենք
մօտեցանք Եւրոպային, բացուեցան մեզանում ուսումնարանները,
տարածուեց ուսումը ժողովրդի մէջ, հեշտացան հաղորդակցու-
թեան ճանապարհները, բացուեցան բազմաթիւ ասպարէզներ՝
մարդու գործունէութեան համար կովկասի այլ և այլ էլէմենտները
զարկուեցան իրար, այս բոլորին հետեց ազգայնական ինքնա-
նախնայութիւնը, ազգայնական ես-ի զարգացումը կովկասի մէջ։
Ահա սրանք են երեք գլխաւոր մօմենտներ, մեր կարծիքով,
հայ-վրացական հարցում՝ տաննելիներորդ դարում։

Հայ-վրացական միութիւնը գոյութիւն ունէր հին վրաս-
տանում, բայց այդ միութիւնը միակողմանի էր՝ այնտեղ չը
կար միութիւն երկու հաւասար կողմի, այլ միայն կային վրա-
ցիք և հայ-վրացիք, կար մի վրացիութիւն։ Այսօր այդ միութիւնը
խախտուած է։ Եթէ առաջ գոյութիւն ունէին հայեր, իբրեւ
օտար անդամներ վրաստանի, կամ Գեանջայի խանութեան, կամ
ուրիշների՝ հպատակեցրուած էին նրանց ազդեցութեան *) այ-
սօր հայերը բոլորովին համահաւասար են ուրիշ տոհմերի ան-
դամների հետ, և եթէ առաջ գոյութիւն ունէր առանձնացած
վրաստանը, Գեանջան, Բազու, — այսօր առաջին տեղը բռնեց
ընդհանուրի համար կովկասը, և, եթէ գոյութիւն ունէր անուն
վրացի, ծնուեց նոր անուն-կովկասեցի։ Առաջուայ միութիւնը
խախտուեց և շարունակուում է խախտուել։ Առանձնացան վրա-
ցիք և հայեր, բայց դա չի նշանակում, որ այդ առանձնութիւնը
կը շարունակուի և ապագայում։ Հայ-վրացական միութեան
հողը ոչ երեւի և այսօր է կապուել, այլ պատրաստուել է դա-
բերի ընթացքում։ Բայց այդ միութիւնը ոչ թէ պիտի լինի (և

*) Ուղիղ է, այսօր էլ մեծ է վրաց շրջանի ազդեցութիւնը հայերի
վրայ, բայց հետզհետէ զարգանում է հայերի սեփական շրջանը, որ ա-
սօր գլխաւորապէս կազմում են հայ գրողները կովկասի ազգութիւնները
անպատճառ կունենան միմեանց վրայ ազդեցութիւն, բայց այս փոխա-
դարձ ազդեցութիւնը պիտի լինի բոլորովին ազատ, մէկը պիտի ընդունէ
միւսի բնաւորութիւնը, սովորութիւնները, կուլտուրան իր լիակատար
կամքով։

չի էլ լինի) առաջուայ միութիւն—վրացիութիւն, այլ միութիւն համահաւասար իրաւունքների տէր վրացիների և հայերի *):

Ի հարկէ վրացիների համար (ինչպէս նաեւ հայերի և ուրիշների համար էլ) այսօր գլխաւոր նպատակը կայանում է նրանում, որ ներսից ամրանանք, զարգանանք, ինքնաճանաչութեան հասցենք ժողովրդին, բարեւաւնք նրա տնտեսական դրութիւնը. մեր ներսինը-ոյժ է և գլխաւոր ոյժ...

Դառնանք մեր «Դրօշբառ»-ին: Ուղիղ է, երբեմն «Դրօշբառ» պաշտպանում էր հին միութիւնը, բայց ընդհանրապէս նա կողմնակից էր նոր, համահաւասար իրաւունքներով միութեան: Մենք արդէն գիտենք, որ Թիֆլիսի ընտրութիւնների ժամանակ «Դրօշբառ» միութեան խորհուրդ էր տալիս հայ-վրացիներին, միայն յոյժերով, գրում էր նա, հոգանք ընդհանուր գործը: «Դրօշբառ»-ի և «Մշակ»-ի խմբագրութիւնների շուրջը գոյութիւն ունէր երկտասարդ հայ և վրացի նեղ շրջան, որ յաճախ գործում էր միասին, վրաց-հայկական միութիւն էր փայփայում և այդ միութեան գործին էր ծառայում. նրանք միայն լրագրողների մէջ չէին գրում միութեան մասին, այլ և ունէին ընդհանուր շրջան, գործնական գործունէութեան համար:

1869 թ. 49 №-ի առաջնորդողի հեղինակը յայտնելով այն լուրը, թէ հայերը սևիտական թատրոն են կամենում շինել Թիֆլիսում՝ ասում է. «Եթէ այս լուրը ուղիղ է, վրաց առաջաւոր հասարակութեան միջոց է տրւում երեւցնելու իր հոգացողութիւնը հասարակական գործի համար: Մենք լսեցինք, որ այդ գործի գլուխ անցնողները մեծ հաճութեամբ կը միանան վրացիների հետ նոր թատրոնը կազմակերպելու համար և համաձայն են ընդհանուր թատրոն շինելու, եթէ վրացիք իրանց կողմից կընդունեն սկզբից որեւէ մասնակցութիւն այս գործում և նիւթապէս կ'օգնեն: Ուրեմն մեր հասարակութիւնին է կախուած հիմա երեւցնելու իր գլուխը և աջակցելու սկզբից թատրոնի հիմնարկութեան... Ընդհանուր թատրոնը ի միջի այլոց և նրա համար է ցանկալի, որ նա կը մօտեցնէ մեզ (վրացիներին և հայերին) միմեանց: Հայերը ցանկանում են ոչ միայն ընդհանուր թատրոն կառուցանել, այլ և հայ դերասանների միջոցով անգամ մտածում էին վրաց ներկայացումներ տալ: 1874 թ. Մանթաշեւ և ընկ. մտադրուեց կառուցանելու հայ թատրոնը և վարձել-հայ դերասաններին. «Բացի հայ դերասաններից—գրում է «Դրօշբառ»—ցանկանում է նաեւ գտնել

*) Ցնորիւ-Պուրցելի № 1916.

երկու-երեք վրացի գերասան, որպէս զի աջակէն մեր լեզու իմացող գերասաններին և այդպիսով միջոց տան ներկայացնելու նաև վրացերէն պիէսներ»։—«Կարծում ենք այստեղ աւելորդ պիտի լինի յայտնելու մեր համակրութիւնը, այսպէս է վերջացնում զբաղերը»։

1873 թ. Նոյեմբերին մին Ռուկօ, որը իրան կոչում էր նաև Société generaleի ներկայացուցիչ, մտադիր էր Թիֆլիսի ինքնավարութիւնից գազի և ջրանցքի չինելու գործը վերցնել և Նիկալաձէ կասկած տարաւ այդ «ընկերութեան» և Ռուկօի վերադիմամբ ու «Դրօէբա»-ի անունով նախ Պարիզում, իսկ յետոյ Լոնդոնում հարցրաւ, թէ արդեօք այնտեղ գոյութիւն ունի այդպիսի մի «ընկերութիւն» թէ ոչ։ Երկու քաղաքից էլ պատասխան ստացաւ, որ այդպիսի մի ընկերութիւն գոյութիւն չունի այն տեղերը։ Այս ստացուած տեղեկութիւնները, իբրև յաւելում, բաժանուեցան «Դրօէբա»-ի և «Մեակ»-ի բաժանորդներին։ Ընդհանրապէս, թէպէտ Դումայի մէջ հայերի մեծամասնութիւնը դէմ էր վրացիներին, բայց կային մի քանի հայեր, որոնք միասին էին գործում «Դրօէբա»-ի խմբագրութեան անդամների հետ։

Պիտի յիշենք և այնպիսի մանր փաստեր, որոնք թէպէտ և մանր են, բայց լաւ են որոշում «Դրօէբա»-ի ուղղութիւնը հայ վրացական հարցի մէջ. այս մանր փաստերը սրանք են. «Դրօէբա»-ի մէջ յաճախ պատահում է հայ լրագիրներից և յատկապէս «Մշակ»-ից արտատպած լուրեր, տեղեկութիւններ հայ զրաւանութեան, թատրոնի և կեանքի վերաբերեալ։

1876 թ. լրացաւ «Դրօէբա»-ի գոյութեան տասնամեակը. այս գէպքի առթիւ ճաշ արուեց, որին մասնակիցին, ի միջի այլոց հայերը—Գր. Արծրունի, Աբ. Յովհաննիսեան, Գաբր. Սունդուկեանց և ցերասան Չմշկեան։ Ճաշի ժամանակ պ. Ա. Յովհաննիսեան ասաց. «... Ոյժը միութեան մէջ... Մենք՝ ներկայացուցիչներ վրացի և հայ ժողովրդի, հաւաքուել ենք այսօր այստեղ, տօնելու վրաց լրագրի տասնամեակը։ Պարոններ, ամենքդ համաձայն կը լինիք ինձ հետ, որ այդ մեր միութեան մէջն է ոյժ։ Ուղիղ է, առայժմ փքքր, բայց այնպիսի, որ ապագայում կարող է մեծանալ»...

Հայերը լաւ էին տեսնում, որ թէպէտ «Դրօէբան» երբեմն կրբեմն հայերի հակառակն էր գրում, բայց այդ բանը չէր ռզղոնաւ մարողջ հայութեան դէմ, և Ս. Մեսիսի և Նրա օրգանը անկեղծ և խոր ցանկացողներ էին վրաց-հայկական եղբայրութեան։ Այս երևոյթի վրայ ուշադրութիւն դարձրեց նաև պ. Չմշկեան և ասաց. «Ես ցանկանում եմ չնորհակալութիւն յայտ-

նել «Դրօժբառ»-ին այն համակրութեան համար, որ նա ցոյց էր տալիս, երբ խօսքը լինում էր հայ-վրացական թատրոնի մասին: («Դր.» 1876 թ. № 24):

Այս դրսի փաստերը աւելի պարզ ցոյց են տալիս, թէ որքան ուղիղ է «Դրօժբառ»-ի արտասանած խօսքերը, թէ ինչ ճանապարհի վրայ էր կանգնած այս լրագիրը հայ-վրացական փոխադարձ յարաբերութիւնների մէջ: Վերև, երբ բերում էինք այս լրագրի կարծիքները այլ և այլ երևոյթի մասին, ամեն տեղ երևում էր, որ «Դրօժբառ» ծարաւում էր միութեան և եթէ պախարակում էր հայերի մի քանի վարմունքները, պախարակում էր որպէս վրաց ազգի անադրաւ նեղողների վարմունքները: «Դրօժբառ» մէջ դրուած են յօդուածներ, ուղղակի այս երևոյթի միութեան մասին: 1875 թ. ինչպէս այդ արդէն յիշած ունէինք, «Դրօժբառ» տակից բարկացած մի նամակ, քաղաքային վարչութեան և մի ռուբլիանոց հարկի (նալոգ) աճուրդ վերջնողների դէմ, ինչից և նեղացան հայերը: Այս մասին Ս. Մեսխին գրում է. («Դր.» № 13)»... Մենք ոչ մի ժողովրդի թշնամի չենք և, ևս առաւել հայոց, քանի որ լաւ հասկանում ենք, որ ժողովուրդը բոլորովին անմեղ է այն յաճախ օրինակելի գործերում, որոնց հեղինակներ են նրանց ներկայացուցիչներից մի քանիսը, ևաւ գիտենք, որ մեր Կովկասի մէջ ամենիս վրայ էլ ընդհանուր ուրախութեան կամ խուսբեան բախտն է ծանրացած. հասկանում ենք, որ մենք, միասին ապրողներս, պիտի քաշենք միևնոյն լուծը, բայց մենք թշնամի ենք... բոլորին, ով նեղայնում է ժողովրդին, ով նուաստացնում է մարդու մարդկային արժանաւորութիւնները: Մենք կարծում էինք և կարծում էլ ենք, որ այս բոլորի մէջ հայ լրագիրները և բոլոր իսկական հայերը կը համակրեն մեզ, որ նրանք էլ ատում են այն, ինչ ատում ենք մենք և սիրում են, ում սիրում ենք մենք: Ուրեմն էլ ինչո՞ւ են բանակօրւ մղում մեզ հետ հայ լրագիրները, ինչո՞ւ նեղացան մեզանից հայերը:

Ուղիղ է, որ «Դրօժբառ» միայն չը բարձրացրեց իր ձայնը ընդդէմ հայ վանառականի, որը նեղում էր վրաց ժողովրդին, նա ընդդէմ էր և այն հայերին, որոնք արտաքսեցին վրացի ձայնաւորներին Թիֆլիսի դումայից, պախարակում ու կուռում էր և նրանց դէմ, որոնք կամենում էին վրացիներին նուաստացնելով՝ Արմենիայի անունը մեծացնել, բայց միթէ իր ազգային ինքնությունութեան պաշտպանելը հակառակ էր միութեան, և առաջաւոր հայեր, և հայ լրագիրներ չը պիտի աջակցեն վրացիներին, երբ սրանք պաշտպանում են իրանց արդար իրա-

ւունքը հայ բարբարոսներից: Միթէ մենք հայերի կողմը չը պիտի բռնենք, երբ նրանց անարդար կերպով վատարանում են մի քանի վրացիք: Սա ոչ թէ գէժ է միութեան, այլ, ընդհակառակը, այս բանն է ուղղակի պահանջում իսկական միութիւնը և սօլիդարական կապը:

Այս միութեան մասին կտրական կերպով գրում էր Գ. Արծրունին 1879 թ. („Դր“ № 13—16). „Այսօր կովկասի այս կողմը բռնած ունեն երեք բնիկ լուսաւորութեան հետեւող ժողովուրդ—Վրացի կովկասեան տոհմը, հայ և թաթար տոհմեր: Այս երեք տոհմը այսօր Անդրկովկասի բնիկ բնակիչներ են, փոխադարձ օգնութեամբ կը շէնանան, միմեանց բռնամուրեամբ էլ կը կործանուեն...»

„Մեր Վրաստանի ժողովրդին և նրա առաջաւոր մարդկանց գրօշակի վրայ այսօր պիտի գրուած լինի հետեւեալը. „Փոխադարձ աջակցութիւն, փոխադարձ յարգանք, երեք ազգութեան համար էլ միատեղ հոգացողութիւն, եղբայրական կապ և միացած ոյժով և ներքին վատութեան ուղղելը *) որ այսպէս արգելը է լինում մեր բարեկեցութեան ճանապարհի առաջաւոր թաղութեանը...“

Սրանով կը վերջացնենք մեր նկատողութիւնները „Դրէօբայի“ վերաբերմամբ: „Դրէօբան“ տեսնում էր հայ-վրացական այսօրուայ անհամաձայնութիւնը, բայց տեսնում էր նաև աւելի խոր արմատացած միութիւնը, որը հետզհետէ մեծանալով, նկատելի տեղ կը բռնի մեր կեանքում:

Մեզանում մի քանիսները ասում են, թէ հայերը անկեղծ կողմնակիցներ չեն միութեան: Սա կարող էր լինել, եթէ հայերը չափից դուրս կարճ խելքի տէր և կամ առանց բնաւորութեան մի ազգ լինէին: Մենք չենք ենթադրում ոչ մէկը և ոչ միւսը և խոր կերպով հաւատում ենք առաջաւոր հայերի անկեղծութեան հայ-վրացական միութեան գործում **): Հաւատում ենք «Մշակի» հետեւեալ անկեղծ խօսքերին. (տպուեց «Կաւկազի» 1882 թ. № 165.). հայ լրագիրը նկատում է, որ վրաց գրականութեան մէջ չը կայ կրիտիկական ուղղութիւնը. վրացիք չափից դուրս տարուած են իրանց անցեալով և հերոսական գործերով. հարկաւոր է—ասում է նա—ուշադրութիւն դարձնել ժամանակակից հարցերի վրայ, այ, օրինակի համար,

*) Եւ արտաքին վարչութեանն էլ, կ'աւելացնենք մենք:

Ծան. Կալ.

**) Ինչ անենք, որ երբեմն տարօրինակ մտքեր և պրիտէնզիաներ են ծնում թէ մեր և թէ նրանց գլխներում:

Ծան. Կալ.

վրացիների մէջ փոքր չափով է տարածուած ուսումը, լուսաւորութիւնը... «Կարող էինք հաւատացնել բոլորին, ասում է լրագիրը, որ այս խօսքերը ասել տուաւ անկեղծ և սրտակից բարեկամութեան ցանկութիւնը զէպի վրացիները... Մի անգամ մենք պահանջում էինք, որ հայ ժողովրդական դպրոցներում սովորեցնէին վրաց լեզուն (որտեղ վրացիք և հայերը ապրում էին միասին), և թուրքերէն. (որտեղ հայեր և թուրքեր ապրում են խառն), որպէս զի մենք սովորէինք միասին, քանի որ մեր հարեւանները չունէին սեփական ուսումնարաններ: Վրացիք և թուրքեր, զույգ և մի ժամանակ ըմբռնեն, թէ որչափ անկեղծ էր մեր կարծիքը, իսկ հայերը—թէ որքան հարկաւոր էր մեր առաջարկութիւնը»...

Մենք հաւատում ենք այդ անկեղծութեան. որքան աւելի յաճախ կը խօսենք այսպիսի լեզուով, նոյնքան աւելի կը մօտենանք իրար և երկու կողմն էլ շահած կը լինենք:

Այստեղ չենք կարող անցողաբար չը նկատել մի քանի պարոնների վարմունքը, որոնք տարածում են լուրեր՝ մեր նամակների վերաբերմամբ, իբր թէ մենք քարոզելիս լինենք միութիւնը հայերի հետ, թէկուզ այդ միութիւնը մեզ համար տնտեսապէս վնասակար և համահաւասար լինի մեր տերրիտորիայից հեռացուելուն:

Ընդհակառակ, մենք միշտ, երբ խօսում ենք միութեան մասին, ի նկատի ունենք համահաւասար իրաւունքներով միութիւն, ընդգծելով միշտ համահաւասարութիւն խօսքը: Բազմիցս ասել ենք, որ և թէ երկու ազգի իրական շահերը պահանջում են միութիւն, այդ միութիւնը իրադործելի է այնքան, որքան պահանջած կը լինեն փոխադարձ իրաւունքները և արժանաւորութիւնները:

Մեղանում կան այն տեսակ մարդիկ, որոնք չեն հաւատում մեր ազգերի միութեանը, ինչպէս և լինի դա և աշխատում են ամեն կերպ ազաւաղել մեր մտքերը և այդպիսով ոչնչացնել զէպի նրանց ունեցած հաւատը: Յետոյ ինչ են ուզում իրանք. Նրանց՝ այդ փառաւոր անցեալ և լուսաւոր ապագայ ունեցող վրացիներին (ըպի նցանից ուրիշները հօ վրացիներ չեն) և գլուխ յետ դրած պատրիոտներին, պատրիոտներին par excellence, ինչ լայնղ է մի ինչ որ հայերի և թուրքերի հետ միութիւն ունենալ: Նրանց վայել է միմիայն աղայութիւն և և թէ ուզում են միութիւն, այն էլ ուզում են այնպիսի մի միութիւն, որտեղ որ առաջնութիւնը նրանց լինի տուած: Նրանք «նաջիօնալիսաներ են» և այնպիսի «նաջիօնա-

լիստներ», ինչպիսին են ֆրանսիացի անտեսլիստները և Ռուսիայի Սուվորինը, Կամարովը, Գրինգմուտ, Պալմա և ուրիշ շատերը։ Այսօր, եթէ այս մեր «նացիօնալիստները» մեղադրում են Սուվորինին և ընկ. ազգակերութեան մէջ, մենք հաւատացած ենք, որ եթէ էգուց հանգամանքները միջոց տան նրանց (նացիօնալիստներին), նրանք եթէ գերազանցելու էլ չը լինեն Սուվորինին, — նրանցից էլ յետ չեն մնայ, ուրիշ ազգութիւնների վերաբերմամբ «հարկաւոր» միջոցներ ձեռք առնելու մէջ և եթէ այսօր անվստահաբար են պահանջում «էկօնօմիական» իտաղադ բոյկոդ հայերի դէմ, այն ժամանակ կը դիմէին աւելի սաստիկ միջոցների և հալածանք ու կոտորած կը սկսէին Կովկասի բոլոր ազգութիւնների հետ։

Մենք ոչ մի ընդհանուր բուն չունենք այդ տեսակ «նացիօնալիզմի» հետ, այլ միշտ պախարակում և կուռում ենք նրա հետ...

Բայց ոչ մի ժամանակ ազգայնութեան գոյութիւնը չենք դարձրել կուռք մեզ համար։ Մենք առաջնութիւնը տալիս ենք մարդկայնութեան և ոչ վրայիութեան։ Ազգութիւնը մեզ համար չէ նպատակ։ Նա միայն սանդուխտի մի աստիճան է դէպի բարձրագոյն միութիւնը, այն է՝ հասարակութիւնը, եթէ պաշտպանում ենք ազգայնութիւնը... անում ենք նրա համար, որպէս զի դրանով նպաստենք և աջակցենք ազգերի համերաշխութեան, մօտեցնենք մի ազգութիւնը — միւսին։ Մենք չենք աւտում, թէ որ մենք — վրացիներս չը լինենք, ամեն ինչ թող կըրակի կերակուր դառնայ, թող լինի վրացիութիւն, թող նա աբխաբար պաշտպանէ իր իրաւունքները, թող նա զարգանայ, բայց նա պէտք է յիշի, որ նրանից դէն գոյութիւն ունի աւելի բարձր հասարակութիւն — Կովկաս և ամենամեծ հասարակութիւն — մարդկութիւն։ Այդ մարդկութիւնն է մեր Աստուածը, որի փառաբանութեան առաջ պիտի խոնարհի իր զլուխը վրացիութեան փառաբանութիւնը...

Մենք ներկայ էինք մի հայ ուսանողի թաղման, քահանան հայերէն էր պատարագ մատուցանում, այն ինչ մայրը վրացերէն էր ողբում իր որդուն։ Միթէ կարող էր պատահել մի այնպիսի վրացի, որի չօվինիստական սիրտը լցնէր ուրախութեամբ նրա համար, որ հայը վրացերէն էր ողբում և կամ այնպիսի հայը, որ պախարակէր մօրը դրա համար, որ նա հայ է, բայց ոչ հայերէն էր ողբում իր սիրած որդու դիակի վրայ։ Եթէ զտնուէին այդպիսի անբարոյական ընկած վրացի կամ հայ, զբանք վնասից աւելի ոչինչ չեն կարող բերել իրանց ազգու-

թեան, և ամեն մի ազգութիւն պիտի պատարակէ և հալածէ իր շրջանից այդպիսի անձնաւորութիւններին:

Ի՞նչ տեղ պիտի ունենան այդպիսի արցունքների առաջ ազգութիւնը:

Կայ ընդհանուր մարդկային ողբ, որը պիտի միացնի մարդկանց:

... Մենք խոր համոզուած ենք, որ միութիւնը վաղ թէ ուշ կը հպատակեցնէ իրան ինչպէս հայ, նոյնպէս և վրացի շօղիներսներին:

Ահա մեր հաւատը և հայեացքը: Բարկութեան բուռներին գուցէ երբևէ տնարդար վարուենք կամ հայի և կամ վրացու հետ, կարող է պատահել, որ սխալուենք, բայց մեր կեանքի մէջ միշտ կը տիրապետենք այդ միութեան իդէալը:

Մենք չենք վախճում ոչ ոքի կրիտիկայից: Թող ուղիղ ըմբռնեն մեր միտքը և այնուհետև ինչ որ ուղում են թող գըրեն...

Վրաց. թարգմ. Դ. ԳԱԼՍՏԵԱՆ